**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2019թ. N 44-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 18-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Տեղական տուրքի արտոնություն սահմանելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.2. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացում կատարելու համար Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Դրամական հատկացումներ կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բագրատյան Արտակ Կաղլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունիսի 18
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2019թ. N 45-Ա

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերին համապատասխան՝ ավագանին որոշում է՝

1. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում կառուցվող ֆուտբոլի մարզադաշտի շինարարության թույլտվության տրամադրման համար սահմանել տեղական տուրքի արտոնություն՝ նշված կազմակերպությանը ազատել տեղական տուրքի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է Ջերմուկ համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 21-ի ««Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին շինարարության թույլտվություն տալու մասին» N 91-Ա որոշմամբ ծագած հարաբերությունների վրա:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...8... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2019թ. N 46-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 178-Ա հրամանով հաստատված անվանացանկում համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբում նոր՝ 4-րդ կետ ավելացնելու համար՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ-աուդիտոր՝ ծածկագիրը 2.3-4:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարությանը օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8........ դեմ-....0........ ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2019թ. N 47-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| հողամասի օտարման նպատակը | հողամասի գտնվելու վայրը | մակերեսը հա | Մեկնարկային գինը, դրամ | հողամասի ծածկագիրը | նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը |
|---|---|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերհեր | 0,06633 | 50 000 | 10-028-0118-0004 | գյուղատնտեսական | խոտհարք |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերհեր | 0,33072 | 160 000 | 10-028-0118-0005 | գյուղատնտեսական | խոտհարք |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերհեր | 0,14592 | 70 000 | 10-028-0118-0027 | գյուղատնտեսական | վարելահող |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերհեր | 0,2 | 30 000 | 10-028-0172-0026 | գյուղատնտեսական | այլ հողատեսք |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերիեր | 1,88397 | 135 000 | 10-028-0121-0009 | գյուղատնտեսական | այլ հողատե |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերիեր | 0,5803 | 280 000 | 10-028-0118-0026 | գյուղատնտեսական | խոտհարք |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերիեր | 0,2309 | 30 000 | 10-028-0121-0011 | գյուղատնտեսական | այլ հողատեսք |
| գյուղատնտեսական գործունեության համար | գ. Հերիեր | 1,58637 | 120 000 | 10-028-0150-0155 | գյուղատնտեսական | արոտա-վայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | Ջերմուկ | 3,4 | 230 000 | 10-002-0434-0003 | գյուղատնտեսական | արոտա-վայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | Ջերմուկ | 2 | 135 000 | 10-002-0434-0002 | գյուղատնտեսական | արոտա-վայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | Ջերմուկ | 2 | 135 000 | 10-002-0434-0004 | գյուղատնտեսական | արոտա-վայր |
| բնակելի կառուցապատման համար | Ջերմուկ, Շահումյան փողոց N 10/12 | 0,02703 | 340 000 | 10-002-0013- | բնակավայրերի | բնակելի կառուցա-պատման |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ………8…. դեմ-………0… ձեռնպահ- …0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունիսի 18
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2019թ. N 48-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի 2019 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Ռաֆիկ Ստեփանյան՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ

Մարիամ Վարդանյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Մելադա Առաքելյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Սամվել Բադասյան՝ 120 000 (հարյուր քսան հազար) դրամ

Արթուր Գրիգորյան՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ

Զորիկ Վարդանյան՝ 120 000 (հարյուր քսան հազար) դրամ

Սուսաննա Վիրաբյան՝ 120 000 (հարյուր քսան հազար) դրամ

Սևան Վարդանյան՝ 80 000 (ութսուն հազար) դրամ

Իզաբելա Ղազարյան՝ 80 000 (ութսուն հազար) դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կաղլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……8…… դեմ-……0…… ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունիսի 18
Ջերմուկ